



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

« 25 » օգոստոսի 2017 թ.

N 239-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ՄԱՐՏՈՒՆՈՒ
ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆ ՎԱՐԴԱՆ ԿԱՐՈՅԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի N 992-Ն որոշման դրույթներով ու հիմք ընդունելով Վարդան Կարապետյանի դիմումը՝ կարգադրում եմ՝

1. 2017 թվականի օգոստոսի 25-ից «Մարտունու բժշկական կենտրոն» պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Վարդան Կարոյի Կարապետյանի հետ կնքած 2014 թվականի օգոստոսի 25-ի N 145 աշխատանքային պայմանագիրը երկարաձգել 1 /մեկ/ տարի ժամկետով՝ մինչև 2018 թվականի օգոստոսի 25-ը:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ



ԿԱՐԵՆ ԲՈԹՈՅԱՆ